«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-L որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ հունվարի 2026 թվականի N ____-L

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի N 252-L ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N 252-L որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 159-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ.
«Ռազմավարության կրթական բաղադրիչը բխում է Ազգային ժողովի կողմից ընդունված՝ Կրթության զարգացման պետական ծրագրից.».

2) 160-րդ կետի 4-րդ կետից հետո լրացնել նոր 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) ունենում են վերաբերելի կրթական բաղադրիչ, որը համահունչ է Ազգային ժողովի կողմից ընդունված՝ Կրթության զարգացման պետական ծրագրին։»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փ**

Երևան